

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՏԵՏՐ 6

1902 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ա.ԼԵՎՍՍԱՆԴՐԻՍ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այն միահամուռ ու ջերմ ընդունելութիւնը զոր
զրեթէ Եգիպտահայ ամբողջ գաղութը ըրաւ « Ազատ
Խօսք » ի, իր վերերեւման առթիւ, մեր վրայ պարտք
կը դնէ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելու
բոլոր ծանօթ ու անծանօթ բարեկամներուն : Քաջա-
լերիչ շնորհաւորութիւններու տարափ մըն է որ կը
սեղայ մեր վրայ երկու շաբաթէ ի վեր : Ալեքսան-
դրբիա, Գահիրէ, Զակազիկ, Մանսուրա, Փայուս, ա-
մէնքը միաբերան « յառա՛ջ » կը գոչեն մեզի : Փողո-
վուրդը իր աննենգ բնազդովը կը զգայ թէ « Ազատ
Խօսք » իր առերեւոյթ քանդիչ գերովը օգտակար բան
մը պիտի շինէ Եգիպտոսի մէջ ու ասոր համար ամէն
կողմէ խանդավառ ողջոյններ կ'ուղղուին անոր :

Շնորհակալ ենք :

Ումանք բերանացի կամ զբաւոր կերպով վախ
կը յայտնեն սակայն որ գուցէ « Ազատ Խօսք » ի իր զէմ
թշնամիներ յարուցանէ որոնք ամէն անխոտտովանելի
միջոցներով ջանան լսեցնել զայն ու յաջողին :

Այդ վեհերոտները կը վատահեցնենք թէ « Ազատ
Խօսք » ի կուրծք պիտի տայ ամէն թշնամանքի ու ան-

նըկուսն յաճառութեամբ պիտի զխմէ իր ստաջադրած նպատակին:

Քանի մը աղբաթաթաւ սրիկաներու պողտուքները չեն որ մեզ պիտի կասեցնեն:

«Շունները կը հաջնեն, բայց կարուսանը կ'անցնի» կըսէ արարական առածը:

ՎԵՐՋՆԱՇԽԱՐՀ

Գիտաւորը զոր Ամերիկացի աստղագէտներ նըշմարած էին առաջին անգամ, անեղ վազքով մը կը դիմէ դէպի մեր աշխարհը. կարծես առնելիք ունի մինէ: Վաղը միւս օր պարզ աչքով պիտի տեսնուի երկինքին երեսը եւ հեռզնեռէ պիտի մեծնայ ու մեծնայ: Եթէ միաքը չփոխէ ու շարունակէ իր ճամբան այն ուղղութեամբ զոր ընտրած է, աստղագէտներու խօսքին նայելով՝ բաներնիս բուրդ է: Երեք ամիսը չանցած այս աշխարհը, ուր մեր առժամեայ բնակութիւնը հաստատած ենք, բնաջինջ պիտի ըլլայ սոսկալի հոգեվաբքով մը:

Պահ մը ենթադրենք որ չարաշուք գիտաւորը իր ճամբան չփոխէ եւ սպառնալից մօտեայ մեր խեղճ անպաշտպան Երկրագունդին: Աստղագէտները որոնք արդէն չափած են վազքին արագութիւնը, տեղն ի տեղօք պիտի ըսեն մեզի այն օրն ուր վերջնաշխարհը պիտի սրտասնի: Ենթադրենք որ Դեկտեմբեր 18ն է այդ գերագոյն օրը եւ մենք ալ Դեկտեմբեր 18 ին հասած ենք:

Քանի մը ժամ ու անահ՝ ամէն բան ոչինչ պիտի գտնայ: Հողը կրակ պիտի կտրի, ծովը պիտի չոգիանայ,

քար, բոյս, մարդ, անասուն, ինչ որ կը շնչէ. ինչ որ կ'ապրի, ակնթարթի մը մէջ պիտի անէանայ . . . :

Ի՞նչ պիտի ըլլայ Դեկտեմբեր 18 ին Ալեքսանդրէրիայի հայերու կեանքը: Կ'երեւակայեմ որ այն բնական մղումով զոր մարդիկ ունին մեծ վառնքնութեամբ ժամանակ իրարու մօտ գալու, պիտի ուղերձ ժողովուրդ մտնէր մէկտեղ եւ հաւանական է որ Մէնչիէի հրապարակը ընտրենք իբրեւ ժամադրաւայր.

Ա՛հ, տխուր եւ միանգամայն մեծ տեսարանը . . . ամէնքս հաւաքուած՝ սպասելով գերագոյն ջախջախութիւն:

Ահաւասիկ ժամը իրիկուան հինգն է. աստղագէտները հաշուած են որ վեցին պիտի պատահի աղետքը, քեզ ժամ մը ունինք ապրելիք:

Ու երեւակայութեան աչքերով կը տեսնեմ այդ մէկ ժամուան Մէնչիէի պատկերը:

Ահա՛ Սմբատ Բիւրատ նառկիլէն ձեռքը կը փչէ կրակին վրայ որ կը սպառնայ մարելու: Երջանի՛կ է: Ժամէ մը ալ մնաս բարո՛վ սպարանի, թուղթի, գրաշարի ու փոսթայի հողերը: Մտմտուք մը միայն. գոնէ սա Տիգրան Երկաթի կենսագրութիւնը աւարտած ըլլա՛ր. բայց մնաս չունի, գէթ վստահ է որ մինչեւ մէկ ժամ նառկիլէն պիտի աւարտէ:

Պոռսայի սանդուխներուն վրայ նստած է Զարեհ Սըվազը եւ կուլայ: Այնքա՛ն ջանքերէ ետքը վերջապէս խնամակալ ըլլալ ու այնքա՛ն քիչ վայելիլ իր փառքը: Ա՛հ, անողոք ճակատագիրը:

Երուանդ Պոյաճեան, արեւելեան մագերու ներկարարը, վերջապէս գտած է իր ուղերձը Շահին ուղղուած ու մոռնալով որ ժամէ մը աշխարհ պիտի կործանի, հրապարակին մէջ, ասդին անդին Գալֆաեան

նանը կը փնտռէ որպէս զի անոր յանձնէ զըկուելու համար ուր որ անկ է: Արտաշէս ձիգմէճեան, վերջնաշխարհի այս գերագոյն ըտպէին, խղճահարուժենէ տանջուած, ուղերձը յանձնած է իր տէրոջ:

Բայց, զարմանալի տեսարանը դիտեցէ՛ք: Լեւոն Մկրտիչեան ու Երուանդ Օտեան, քով քովի, սեղանի մը շուրջը բազմած, զեպիպ կը խմեն, սիրալիբ խօսակցութեամբ, մինչ Միհրան Տամատեան դիմացնին կեցած՝ պիշ պիշ կը դիտէ զիրենք, սպառնական ու գայթակղալից աչքերով:

Միքայէլ Կուրճեան բազմութեան մէջ կը փնտռէ «Մարտիկ Աղա»ի հերոսները յետին թողութիւն մը առնելու համար իրենցմէ:

Գրիգոր Մելքոնեան բարկացած է: Չկրնար ըմբռնել թէ Փաշան չեկած ինչպէ՞ս վերջնաշխարհը կը պատահի Եգիպտոս. «Փաշայա սորոզա՞ր մը, կը հարցընէ Միհրան Թեւեանին՝ որ կը պատասխանէ:

— Դիւանատան կողմէ այդ մասին բան մը չէ հաղորդուած նորին Վսեմութեան:

Ու ահա՛ Գրիգոր Մելքոնեան

— Փրօքեսո իսկրիւն, փրօքեսո իսկրիւն, պոռալով Մէնչիէի շրջանը կ'ընէ:

Շնորհքեան եւ Թուրչուճեան մէյմէկ Սահմանադրութեան տեսրակով զինուած, շրջապատած են Գալփաեան նանը:

— Դասալի՛ք, կը պոռայ թուրչուճեան, անոր երեսին, մինչ Շնորհքեան՝ ժամացոյցը ձեռքը բռնած՝ կը գրչէ:

— Դեռ ժամ մը ատեն ունինք, շուտով խնամակալի պաշտօնէն հրաժարականնիդ գրեցէք ու ՂԸԻ կեցէ՛ք:

— Ո՛չ, կը պատասխանէ նանը գլխի շարժումով:

ի զո՛ւր Տօք. էնֆիէճեան միջմտեւ կը փորձէ
խնդիրը անուշ տեղը կապելու համար:

— Եղբայր, հանդարտեցէ՛ք, արդէն ժամէ մը
աշխարհ պիտի կործանի, չարժեր:

— Թո՛ղ աշխարհ կործանի, բայց նախ սահմա-
նադրութիւնը յարգենք, կը գոռայ անդրդուելի
Շնորհքեանը:

Ու այս իրարանցումին մէջ Լեւոն Պէրպէրեան
մէկը կը փնտռէ հետը թափլու խաղալու համար. . .

Իսկ Պետրոս Պէրպէրեան անմխիթար է.

— Մե՛ղք, կը պատմէ ամէնուն, վաղուան «Ար-
շալոյս»ին մէջ «Ազատ Խօսք»ի դէմ յօդուած մը կար
չպիտի կրնանք կարգալ:

Պանքայի Միհրանը զիմացը ելլողին Լեւոն Մկը-
տիչեանը կը հարցունէ: Դեռ առկախ հաշիւ մը մնացեր
է եղեր կարգադրելու համար:

Օննիկ Թաշճեան, Կեսարիոյ այդ խորթ զաւակը,
ցնծութեան մէջ է, խնդումներս կը պոտի.

— «Ի՛նչ յուզում, ի՛նչ իրարանցում է աս. օ՛րս,
իմ սիրած բանս»:

Արթին Խաղիկեան ու քէօմիւրճի պատուելին
սեղանի վրայ ելած ճառ կը խօսին:

Նշան Ամատունի Աղքատախնամին ուղղուած
խնդրապիւրները պատուելու վրայ է:

Դանիէլ վարդապետ բազմութենէն օգտուելով
հանգանակութեան ձեռնարկած է ի նպաստ կարօտ-
եալի մը:

Միհրան Թեւեան սեւ վերարկու մը հագած է .
փաստարանի պաշտօնական համազգեստը.

— Իբրեւ քարտուղար ապրեցայ բայց իբրեւ
փաստարան կ'ուզեմ մեռնիլ

— Ի՛նչ ալ աղուոր վայլեր է դեղին մօրուքին,

կ'ըսեն հարսնացու աղջկանց մայրերը զինքը ցոյց տալով :

Իսկ խեղճ Բարեպաշտին խելքին եկած է. ամենուն շաքար կը բաժնէ, կարծելով թէ նշանուեր է :

Հրապարակին մէջտեղը Լեւոն Նիզամեան իր պատմական գլխարկով վերջին անգամ կը հսկէ Հայ Նուագախումբին վրայ ուր, պէ՞տք է ըսել, Բամբ փորտանը կը հնչեցնէ :

Բայց վայրկեանները կ'անցնին, գերագոյն ըստ պէն հասնելու վրայ է, յուզումը իր ծայրագոյն աստիճանին հասած է, Լալազին վայնասունի մը մէջ ամէն մարդ զերար կ'ողջագուրէ վերջին անգամի համար. ա'լ ամէն հակաակուսիւն, ամէն սխալակութիւն մոռցուած է : Երուանդ Օտեան Գրիգոր Մելքոնեանի մօրուքը կը համբուրէ ուր փոխադարձաբար կտոր մը չէ՛մէնլի բաստրմա կուտայ իրեն ըսելով :

— Եհեկ պախ, սէնին «Ազատ եմք» սան սահաքարը տեղի՞նք :

Լեւոն Մկրտիչեան, Տամատեանի գրիկերուն մէջն է : Թուրչուճեան Պերճ Օհանեանի հետ հոգւոյ անմահութեան վրայ կը խօսի :

Ա՛հ, վսեմ տեսարանը . . .

Յանկարծ գրաշար Սեդրակի ձայնը կը լսուի.

— Յաւելուած Փիւնիկի, յաւելուած Փիւնիկի :

Ի՞նչ կայ սրգիօք : Հարիւբաւու՞ ձեռքեր կ'երկըննան ու կը խլեն թերթերը :

Հեռագի՛ր մը Բարիզէն՝ ծանուցանող ուր աստղագէտները սխալ ըրնք են իրենց հաշիւը եւ թէ զիսաւորը առանց մեզի վնասելու պիտի անցնի երթայ :

Եւ յաւախար՝ իր տունը կը վերադռնայ ամէն մարդ :

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԴԱՄԱԽՅՈՒՆԵՐ

Արշալոյսին մէջ Յ. Օհանեան ստորագրութեամբ յօդուած մը տեսանք մեզի գէտ ուղղուած: Յ. Օհանեան զիտենք որ՝ դժբախտարար՝ չէնք շնորհք ուղղագրութիւն մը անգամ չի գիտեր եւ բացարձակապէս անկարող է երեք բառ քով քովի բերելով խօսք մը կազմելու:

Այդ Ատանացի ռասքան, որուն չտես զէվզէկութիւնը ծաղու առարկայ նդած է Կահիրէի բոլոր հայերուն մէջ, կ'երեւայ որ ուրիշի մը գրածին տակ իր ստորագրութիւնը գրած է պարզապէս, պարսաւորիչ բայց ոչ սխալողական հարկէ մը բռնադատուած:

Կը խղճանք իր վրայ: Այդ Յ. Օհանեան անունը որ այնքան մեծ պատճառներ ունէր մոռացութեան մէջ թաղուելու, այսպէս յանկարծ հրապարակ կ'ելլայ եւ առիթ կուտայ որ անախորժ բաներ ըսենք իրեն: Ինչ որ ամէնէն աւելի անբժրունելի է, սա է թէ այդ պարտնը յանդգնած է «բարոյական»ի պէս բառեր գործածել այն յօդուածին մէջ որուն տակ իր ստորագրութիւնը կը գտնուի: Բարոյական եւ Յ. Օհանեան... , ոտանաւորի մէջ գուցէ իրարու յարմարին այդ բառերը, բայց իրականութեան մէջ ամէնքս ալ գիտենք որ իրարու գէտ կը կուտին: Մեզ «անբարոյական» կը նըկատէ եղեր այդ անդարմանելի զէվզէկը որովհետեւ քննադատեր ենք Մեղքո՛ւ կան եղբայրներու ծանօթ գանձանակը !!!

Չենք գիտեր ի՞նչ բարոյական է Պ. Յ. Օհանեանինը. բայց կը հարցնենք թէ՛ արդեօք Մեղքոնեան եղբայրներու մէկ քննադատելի արարքը հրապարակելէ աւելի իրական անբարոյականութիւն չէ՞

Ձէյթունցի սովետներու ի նպաստ զրկուած դրամը կողորդն անցունել ու փախչիլը ու յետոյ խայտառակաբար վնասուելը յեղափոխական կուսակցութենէ մը:

Մենք որ մեր ճամբուն վրայ աւիթը ունեցանք Պ. Յ. Օհանեանի պէս միտքէ չանցած բարոյականի դատախօսի մը հանդիպելու, կը փափաքէինք այս մասին լուսաբանուել:

«Ինչո՞ւ քու գրացիիդ աչքին շիւղը կը տեսնես ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր» կ'ըսէ Աւետարանը, ո՛վ Յ. Օհանեան:

Ինչ որ է, մենք գիտենք թէ խեղճ Օհանեանը, ինչպէս ըսինք, Մեկքոնեանց գանձանակին օգնողներուն պէս պարտաւորիչ, բայց ոչ ստիպողական հրամանի մը հպատակած է: Անձնուէ՛ր ծառայ: Կ'արժէ որ Մեկքոնեանները, որոնց խանութին պաշտօնեան է այս տխուր արարածը, քանի մը ոսկի յաւելում ընեն իր ամսականին վրայ:

Ուրիշ բարոյականի դատախօս մը «Արշալոյս» յաջորդ թիւին մէջ չորս սիւնակ լեցուցած էր մեզի դէմ: Այդ բարոյախօսը, թէեւ ծածուկ պահած է ինքզինքը, սակայն յայտնի կ'երևայ որ այն բարոյապէս վախճանած անձն է որուն այնքա՛ն յարմարօրէն Անթաղ Դիակ անուներ սուած է Սմբատ Բիւրատ:

Յ. Օհանեան ստորագրութեամբ յօդուածը եւ անստորագիրը գրութեան ոճով այնքա՛ն իրարու կ'եղբայրակցին որ կարծենք սխալած չենք ըլլար եթէ ըսենք որ երկուքն ալ բխած են միեւնոյն աղբիւրէն, կամ լաւագոյն է ըսել միեւնոյն աղբիւրսէն:

Մեզի չլայելը այդ աղտոտութիւններուն շատ ձօմննալ: Անոնք միայն արժէք ունին Եղիշէ Թորոս-

եանին համար որ այդ յօղուածներու հրատարակու-
թեան գինը սակարկած է.

Գանք հիմակ Մեղքոնեան եղբայրներու գանձա-
նակի խնդրին: Մենք գրած էինք թէ Տ. Գրիգոր եւ
Կարապետ Մեղքոնեան, Կեսարացի ծխախոտի վաճա-
սականները, իրենց պաշտօնեաներուն վրայ պարտք
գրած են ամսական բան մը վճարելու սնտուկի մը
որուն մէջ գոյացած տարեկան հասոյթը կը ղրկեն
պատրիարքարան ի նպաստ Կեսարիայի մէջ գտնուած
Որբանոցի մը եւ թէ այդ զումարը ազգային թերթե-
լու մէջ կը հրատարակուի իբրեւ նուէր Տ. Գրիգոր եւ
Կարապետ Մեղքոնեան եղբարց :

Յ. Օհանեան, բարոյականի տէր պարոնը, կ'ըսէ
թէ բացայայտ ճշմարտութիւն մը գիտակցօրէն խեղա-
թիւրելու ստորնութիւնը յանձն առած ենք այնպէս
գրելով :

Եւ մեր «խեղաթիւրում»ը երեւան հանելու հա-
մար Պոլսոյ «Արեւելք» թերթէն վկայութիւն առաջ կը
բերէ:

Ի՞նչ կ'ըսէ Պոլսական թերթը:

«Մեղքոնեան էֆէնտիները ասկէ քանի մը տարի
առաջ, բարի եւ առողջ մտածումը ունեցած էին իրենց
գործաւորներուն մէջ աղքատաց օգնութեան սնտուկ
մը հաստատելու, ամէնէն բարձր պաշտօնեայէն մինչեւ
ամենայետին գործաւորին ՊԱՐՏԱԻՈՐԻՉ ընելով, բայց
ս'չ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ, իր առած ամսականէն համետ բան
մը վճարել»:

Մենք ի՞նչ ըսած էինք Պ. բարոյախօս:

Իսկ գալով թէ նուէրը ի՞նչ անուանով կը ծա-
նուցուի. քաղնք նորէն «Արեւելք»էն:

«Արեւելք»ի 5000րդ թիւին մէջ հրատարակուած

«աջ ու ծախ»ովս ներկայացուցած էի Գահիրէի Մեկ-
Քոնստն եղբարձ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ծագումը
եւայլն . . . :

Մենք ի՞նչ ըսած էինք. թէ նուիրատուութիւնը
Մեղքոնեան եղբարց անունով կը յիշատակուի: Ի՞նչ-
պէ՞ս յիշատակած է Սրբեւելք. ճիշտ մեր ըսած կեր-
պովը: Ո՞ւր է խեղաթիւրումը ասոր մէջ:

Բայց ամէնէն ծիծաղելին սա «պարտաւորից» բայց
ո՛չ «ստիպողական»ն է: Եթէ «ստիպողական, բայց ո՛չ
պարտաւորից» ըլլար հանգանակութեան ձեւը արդեօք
տարբերութիւն պիտի տեսնէի՞ք մէջը:

Ամէնէն անհաւատալի բանին հանդիպեցանք
Սրբեւելքի այն հատուածներուն մէջ որոնք մեզի դէմ
իբր վկայութիւն առաջ բերուած էին:

Կեսաբիոյ Առաջնորդ Պալեան Տրդատ Եպիսկոպոս
զանձանակին հասոյթը ծանուցանելէ վերջ կը յայտնէ
թէ այս առթիւ ամէն տարի պատարագ կ'ըլլայ եղեր
Ս. Կարապետ վանքին մէջ, գրեթէ որոնց ննջեց-
եալներուն հոգւոյն:

— Մեղքոնեան էֆէնտիներու զործաւորներո՞ւն
ննջեցեալներու հոգւոյն:

— Չէ, այլ Մեղքոնեան էֆէնտիներու ննջեց-
եալներու հոգւոյն:

Ուրիշներուն դրամը պարտաւորից, բայց ոչ ստի-
պողական կերպով ձեռքերնուն առնել, շուէր տալ,
այդ նուէրով այս աշխարհի մէջ փտաւորութիւն ու տն-
գիի աշխարհին մէջ ալ ննջեցեալները հոգա՛լ . . .

Բարեգործական վաշխատութեան այս ձեւը չէ-
ինք կրնար երեւակայիլ երբեք:

Կոհ ենք որ Պ. Յ. Օհանեան իր անձարակ պաշտ-
պանողականով այդ անբարոյականութիւնն ալ մեզի
իմացուց:

Բայց Պ. Յ. Օհանեանի բարոյականը, ինչպէս տեսանք, բոլորովին տարբեր է: Մեր յիշած գանձանակի խաղճութիւնը այսպէս վկայութիւններով ու ծանրացուցիչ պարագաներով հաստատուէ վերջ հետեւեալ սողերը գրելու քաջութիւնը ունի:

«Սա ալ չի մոռնանք յիշել թէ՛ Մեկընեսան է՝ ֆէնտիները իրենց քակէն ըրած նուէրները ի ձայն փողոյ եւ թմբի տարածայնելու սովորութենէն պարզապէս կը սոսկան. անոնք բարեքը կը կատարեն ձեռքի տակէ, գիտակցաբար. հետեւելով իրենց խըղձ մըտանքի ձայնին Տիայն»:

Ո՛վ բարեք, ո՛վ խղձմտանքի ձայն, ո՛վ Յ. Օհանեան, ո՛վ բարոյական, ո՛վ Լեւոն Մկրտիչեան . . .

Տխո՛ւր, տխո՛ւր, տխո՛ւր, արդարեւ :

ՀԱՅ ՀԱՆԴԷՍ

Տ. Ա. Արփիարեանի Հանդէսը կը շարունակուի կանոնաւորապէս հրատարակուիլ: Լոյս տեսած է 4 ըդ թիւը:

Նախորդ «Ազատ կօսք» ի մէջ գրած էինք որ Եղիպտոսի մէջ բաժանորդ գրուիլ փափաքողները կըրնան դիմել Տ. Մեարոյ Նորատուհեանի որ ստանձնած է թերթին դորձակալութիւնը:

Տ. Մեարոյ Նորատուհեան թէեւ առժամեայ կերպով յանձն առած էր անձնուէրաբար զբաղիլ «Հայ Հանդէս» ով, սակայն մենք կարծեցինք թէ այդ առժամեան կրնայ մնայուն համարուիլ: Տ. Մեարոյ Նորատուհեանի բազմադան զբաղումները, աւա՛ղ, չնհրեցին որ մեր կարծիքը իրականանար: Բարեբախտա-

բար Տ. Անդրէաս Մկրեան (Բարեպաշտ) յանձն առած է սոյն գործակալութիւնը :

Իր հասցէն է .

M. ANDRÉAS MIGUIRIAN

Peintre

rue Abil Dardad

Alexandrie

ՃԻՇԴ ՍՈՒԼԹԱՆԻՆ ՊԷՍ

Գիտենք թէ երբ Տաճկաստանի որ եւ է մէկ գաւառը ջարդ կամ հարստահարութիւն տեղի ունենայ անմիջապէս Սուլթանին հրամանով այդ գաւառի ժողովրդին կողմէ թուղթ մը կը ստորագրուի որուն մէջ բնակիչները գաւառին մէջ տիրող անդորրութիւնն ու խաղաղութիւնը հաստատելէ ետքը, մաղթանքներ կը նեն Սուլթանին կենացը համար : Այդ «պարտաւորիչ բայց ոչ ստիպողական» հանրագրութիւնները որոնք Պոլսոյ թերթերուն մէջ կը հրատարակուին գիտենք թէ ինչ նշանակութիւն ունին. այսինքն՝ բոլորովին հակառակը իրենց պարունակածին :

Հիմակ, Եգիպտոսի մէջ, Սուլթանի օրինակին կը հետեւին Մեկքոնեան եղբարք, որոնց շառաւիղին պէտն է եղեր Գրիգոր Մեկքոնեան, ինչպէս կը պատմէ բարոյականի տէր երիտասարդը՝ Յ. Օհանեան: Մեկքոնեան եղբարք ալ տեսնելով որ «Ազատ Խօսք»ի մէջ Գանձանակի գայթակղական նուէրատուութիւնը մէջտեղ հանեցինք, անմիջապէս իրենց հպատակներուն, այսինքն պաշտօնեաներուն, հանրագրութիւն մը ստորագրել տուած են, «պարտաւորիչ, բայց ոչ ստիպողա-

կան» կերպով, որուն մէջ կը փորձեն հերքել մեր ըսածները:

Այդ հանրագրութիւնը, աւելի սուլթանական ըլլալու համար, թուրքերէն լեզուով խմբագրուած է եւ հրատարակուած «Արշալոյս» կաղամբաթերթի 309 թիւին մէջ:

Դժբախտաբար, Մեկքոնեան եղբարց համար, Պ.Յ. Օհանեան ո՛չ միայն վկայութիւններով կը հաստատէ մեր գրած երկու իրողութիւնները, այսինքն՝

Ա. Թէ Մեկքոնեանները պարտք գրած են իրենց գործաւորներուն եւ պաշտօնեաներուն բան մը վճարել սնտուկի մը որուն հասոյթը կը ղրկուի իբրեւ նուէր Կեսարիոյ մէջ գտնուած որբանոցի մը:

Բ. Թէ ուրիշներու զբամով եղած այդ նուէրը Պոլսոյ թերթերուն մէջ կ'արձանագրուի իբրեւ նուէր Մեկքոնեան եղբայրներու:

Այլ նոր ու անլուր յայտնութիւն մըն ալ կ'ընէ Մեկքոնեանց ձախաւեր փաստաբանը, այն է թէ այդ նուէրներու փոխարէն, որոնք կ'առնուին գործաւորներու եւ պաշտօնեաներու զրպանէն, «պարտաւորիչ, բայց ոչ ստիպողական» գրութեամբ, ամէն տարի Կեսարիայի Ս. Կարապետ վանքին մէջ պատարագ կը կատարուի եղեր Մեկքոնեան եղբայրներու ննջեցելոց հոգւոյն:

ԵՒ ՓՐԵԱ՛ ԶՄԵՂ Ի ԶԱՐԷ

Տ. Գրիգոր Մեկքոնեան որ Տ. Լեւոն Մկրտիչեանի բացակայութենէն ի վեր գրեթէ ոտք գրած չուներ Առաջնորդարանը, հիմակ յորմէյետէ Տ. Լեւոն Մկրտիչեան վերադարձած է, սկսած է կանոնաւորապէս ներ-

կայ գտնուել խնամակալներու նիստերուն :

Տ. Գրիգոր Մեկրոնեան այնքան թանձրացեալ տգէտ մըն է որ եթէ, Աստուած մի՛ արասցէ, իր հարստութիւնը կորսնցնէ ու գործ փնասելու ելլայ, ո՛չ ոք պիտի ուզէ զինքը գործածել, նոյնիսկ իբրև սպառաւոր : Ասոր համար իր բացակայութիւնը խնամակալներու նիստերէն մեծ չարիք մը չէր համարուած ոչ ոքի կողմէ :

Նոյնը չէ սակայն իր ներկայութիւնը :

Այդ մարդը պարզապէս խողովակ մըն է որուն մէջէն կը խօսի Տ. Կեռն Մկրտիչեան, այնպէս որ իր ներկայութիւնը Առաջնորդարանի մէջ Տ. Կեռն Մկրտիչեանի ներկայութիւնն ըսել է :

Արդ, Տ. Կեռն Մկրտիչեան որ իր շիւ մեքենայութիւններովը երկպառակութեան խնձոր մը եղած է Աւեքսանդրիայի հայ հասարակութեան մէջ, ի՞նչ ազէկ բան կրնայ փսփսալ այդ մարդուկին ականջին :

Կարելի չէ՞ արդեօք գարման մը խորհիլ այդ ծառի կոծղէն փրկելու համար Առաջնորդարանը :

Ըստ մեզ միակ ու լաւագոյն միջոցն է լուծեալ հոչակել ներկայ խնամակալութիւնը, որ իր ծագումովը ապօրէն է արդէն, ու ձեռնարկել Սահմանադրական քուէարկութեամբ թաղական խորհրդի մը ընտրութեան :

Փողովուրդը որ Մարտի քուէարկութեան ստոն վեց դիրը դբաւ այդ պարապ՝ հետեւաբար Չեսասկար՝ մարդուկին, վստահ ենք որ նոր քուէարկութեան մը ժամանակ նոյն ողջմտութեամբ պիտի չարժի :

Եւ փրկած պիտի ըլլայ մեզի Տ. Գրիգոր Մեկրոնեանէն ու մանաւանդ « ի չարէ » որ է Տ. Կեռն Մկրտիչեան :

ԱՂԱՏ ԽՕՍՔԻ ՇԻՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Երբ անցած տարի՝ Յունիսին՝ Բարիզի մէջ սկը-
սանք հրատարակել «Ազատ Խօսք»ը, 12 տետրակի հա-
5 ֆրանքի բաժանորդագրութիւն մը բացած էինք եւ
չստեր բաժանորդագրուած էին մեր տետրակներուն
կանխիկ վճարելով բաժնեգինը:

Դժբախտաբար զանազան անձնական պատճառնե-
րով 4 ըդ թիւէն յետոյ դադրեցուցինք «Ազատ Խօսք»ի
հրատարակութիւնը եւ հազիւ ութը ամիս յետոյ, Ալեք-
սանդրիայի մէջ, կարող եղանք շարունակել:

Արդ, այդ միջոցին, կորսնցուցինք մեր բաժա-
նորդներու հասցէներուն ցանկը եւ այժմ կըրցանք զըր-
կել միայն անոնց որոնց անունն ու հասցէն քանդակ-
ուած էր մտքերնուս մէջ, այնպէս որ հակառակ մեր
բաղձանքին շատ բաժանորդներ չկըրցան ընդունիլ
«Ազատ Խօսք»ի 5րդ տետրը:

Այժմ կուզանք խնդրել մեր նախկին բաժանորդ-
ներէն որ եթէ անուղղակի կերպով իմացած են «Ազատ
Խօսք»ի վերերեւումը հաճին *carte-postale* ու մը իմաց
տալ մեզ իրենց անունն ու հասցէն որպէսզի կարող
ըլլանք զրկել մեր տետրերը 5 ըդ թիւէն սպսեալ:


ԿԱՐԻ ԴԱՌՆ

«Արշալոյս»ի Եղիշէն, որ մականուններու սովի
մը ատեն Թորոսեանը միայն կըրցած է գտնել իբրև
մականուն, ապտակահարութեան մը ենթարկուեր է
քաֆէ Շիշայի մէջ, Առաքել Փալֆաեանի կողմէ, որ
կարգաթող Ամբրոսիոս Վրդ. Գալֆաեանի ծիծաղաշարժ
ասպեաններէն է, Ս. Կատարինէի եւ Աիւա լերան կար-

դէն : Ապտակ ուտելը արդէն միշտ դժուարամարս է,
սակայն ուտել զայն սասպետի մը կողմէ որունն ասպե-
տութեան պերաթը վաւերացուած է Ա. Բրոսիոս Գալ-
ֆանանի խոհարարուհիին՝ Մաուկոթի՛ն՝ եւ կառավարին՝
Պազիլի՛ն՝ ստորադրութեամբ, իրաւամբ դառնագոյն է :

Ո՛չ, արժանի չէր խեղճ եղիչէն այս աստիճանին :

Երբ առիթ ունենանք վերսկսելու կեղծ Լուսին-
եան Իշխանի կեանքի մանրավէպները եւ պատմենք
այն պարագաները որոնց մէջ ասպետ հռչակուած են
Տ. Առաքել Պէրպէրեան ու Տ. Առաքել Փափազեան,
այն ատեն լի ու լի ճաշակած պիտի ըլլայ «Արշալոյս»
տիրացուն իր կերած ապտակին դառնութիւնը :



Եգիպտոսի համար հատը

ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՉ

Արտասահմանի համար հատը

ԿԷՍ ՅՐԱՆՔ

Ճամբու ծախքը մեր վրայ, մեր հասցէն է՝

YERVANT ODIAN

Poste Restante

(Egypte)

Alexandrie

ԳՐԵՑ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՏՊԱԿՐ. ՀԱՅԿ. ՏՊԱՐԱՆ «ԱՐՄ.ԲՍ»